ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և ՀՀ արդարադատության նախարարի օգնական Սերգեյ Սարուխանյանի՝ Բելառուսի Հանրապետություն (Մինսկ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Կարեն Անդրեասյան և Սերգեյ Սարուխանյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար և ՀՀ արդարադատության նախարարի օգնական:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելառուսի Հանրապետություն (Մինսկ), 2022թ. մայիսի 23-ից 25-ը:

Հրավիրող կողմը՝ Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարար Սերգեյ Խոմենկո:

Գործուղման նպատակը՝ Քննարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Քննարկված թեմաները՝ Երկու պետությունների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության զարգացման հիմնական ուղղություններին, արդարադատության մարմինների գործունեության թվայնացմանը, դատական փորձաքննություններին, միջգերատեսչական համագործակցությանը, դատական ակտերի հարկադիր կատարմանը, հանրային ծառայությունների մատուցման ոլորտին, քաղաքացիական կացության ակտերի գրանցմանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը և ՀՀ արդարադատության նախարարի օգնական Սերգեյ Սարուխանյանը Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարար Սերգեյ Խոմենկոյի հրավերով 2022թ. մայիսի 23-ից 25-ը աշխատանքային այցով գտնվել են Բելառուսի Հանրապետությունում (Մինսկ):

Մինսկ կատարած աշխատանքային այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը հանդիպումներ է ունեցել Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարար Սերգեյ Խոմենկոյի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարար Սերգեյ Խոմենկոյի միջև կայացած հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու պետությունների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության զարգացման հիմնական ուղղություններին, արդարադատության մարմինների գործունեության թվայնացմանը, դատական փորձաքննություններին, միջգերատեսչական համագործակցությանը, դատական ակտերի հարկադիր կատարմանը, հանրային ծառայությունների մատուցման ոլորտին, քաղաքացիական կացության ակտերի գրանցմանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Հանդիպման ավարտին ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը և Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարար Սերգեյ Խոմենկոն ստորագրել են «Հայաստանի Հանրապետություն արդարադատության նախարարության և Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարության միջև համագործակցության մասին» համաձայնագիրը:

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանն ու ՀՀ արդարադատության նախարարի օգնական Սերգեյ Սարուխանյանը աշխատանքային այցի շրջանակներում այցելել են Մինսկի մոսկովյան վարչական շրջանի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժին և Բելառուսական նոտարական պալատի բազմաֆունկցիոնալ կենտրոն, ինչպես նաև Մինսկի քաղաքային գործադիր կենտրոնում ծանոթացել «Մեկ պատուհան» ծառայությանը:

Աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարն ու ՀՀ արդարադատության նախարարի օգնականն այցելել են նաև Բելառուսի Դատական փորձաքննությունների պետական կոմիտե (ԴՓՊԿ) և հանդիպում

ունեցել վերջինիս ղեկավար կազմի հետ, ինչպես նաև ծանոթացել կենտրոնի բազմապրոֆիլ լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությանն ու դրանցում իրականացվող հետազոտություններին, ԴՓՊԿ-ի որակավորման բարձրացման ու կադրերի պատրաստման ինստիտուտի և գիտագործնական կենտրոնի գործունեությանը: Կոմիտե կատարած այցելության ընթացքում ստորագրվել է նաև «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Բելառուսի Հանրապետության դատական փորձաքննությունների պետական կոմիտեի միջև դատափորձագիտական գործունեության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Հարկ է նաև նշել, որ աշխատանքային այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի օգնական Սերգեյ Սարուխանյանը Բելառուսի Հանրապետության գործընկերներին ներկայացրել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում ՀՀ կողմից 2021թ. իրականացված բարեփոխումները և դրանց արդյունքներով իրավակիրառ պրակտիկան՝ կարևորելով Բելառուսի Հանրապետությունում ՀՀ քաղաքացիների կողմից այս ոլորտում բարձրացված խնդիրների համակարգային լուծման անհրաժեշտությունը, նշված բնագավառների թվայնացման, հանրային ծառայությունների մատուցման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

ՀՀ արդարադատության նախարար

Recoverable Signature

X

Karen Andreasyan

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

Կարեն Անդրեասյան

30.05.2022թ.